No. 061/12A

Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությունն իր հարգանք է հավաստում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը և պատիվ ունի հայտնելու ս.թ. մարտի 13-14-ին նախատեսվող ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի Վտանգների նվազեցման գործակալության (ՊՎՆԳ) Վտանգների համատեղ նվազեցման ծրագրի տնօրեն դր. Էլիզաբեթ Ջորջի գլխավորած ԱՄՆ պատվիրակության այցի մասին, և հայցում է նախարարության աջակցությունը՝ դր. Ջորջի պատվիրակության համար հանդիպումներ նշանակելու գործում, անցկացնելու Կենսաբանական վտանգների նվազեցման ծրագրի և Զանգվածային ոչնչացման զենքի տարածման կանխարգելման ծրագրի գործադիր վերանայում, ԱՄՆ-ի և Հայաստանի միջև Զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության վերաբերյալ համաձայնագրի շրջանակներում:

Դր. Ջորջը խնդրել է կազմակերպել հանդիպում երեքշաբթի, մարտի 13-ին ժամը 14:30-ից 17:30-ը Միջգերատեսչական հանձնաժողովի հետ, որը նախագահում է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ գեներալ-լեյտենանտ Ռոմիկ Հարությունյանը, և մեկ այլ հանդիպում չորեքշաբթի, մարտի 14-ին ժամը 17:00-ից 18:00-ը ՀՀ Ազգային անվտանգության ծառայության Սահմանապահ զորքերի հրամանատար գեներալ-մայոր Արմեն Աբրահամյանի հետ: Դեսպանությունը պատիվ ունի հայցելու Նախարարության աջակցությունը՝ հյուրընկալելու երեքշաբթի, մարտի 13-ի հանդիպումը Արտաքին գործերի նախարարության շենքում: Չորեքշաբթի, մարտի 14-ի հանդիպումը Հրամանատարի հետ առաջարկվում է անցկացնել Սահմանապահ զորքերի կենտրոնական գրասենյակում Երևանում:

Դեսպանությունը նաև պատիվ ունի խնդրելու Նախարարությանը փոխանցել կից գրությունը Միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ գեներալ-լեյտենանտ Ռոմիկ Հարությունյանին:

Օգտվելով առիթից՝ Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանությունը կրկին անգամ հղում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը իր հարգանաց հավաստիքը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն
ք. Երևան, 13 փետրվարի, 2012թ.

Առդիր՝ Գրություն գեներալ –լեյտենանտ Ռոմիկ Հարությունյանին դր. Էլիզաբեթ Ջորջի անունից

Defense Threat Reduction Agency
8725 John J Kingman Road MSC 6201
Ft Belvoir, VA
22060-6201

10 փետրվարի, 2012թ.

Երևան, Հայաստան

ՀՀ ազգային անվտանգության ծառայության
տնօրենի առաջին տեղակալ,
Միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ
Գեներալ-լեյտենանտ Ռոմիկ Հարությունյանին

Թեման՝ Կենսաբանական վտանգների նվազեցման ծրագրի գործադիր վերանայման առաջարկվող օրակարգ, ներառելով համակցված հանդիպումներ Զանգվածային ոչնչացման զենքի (ԶՈԶ) տարածման կանխարգելման ծրագրի վերաբերյալ:

Հղում՝

Ա. Զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր՝ կնքված Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև առ 24 հուլիսի, 2000թ. և երկարաձգված առ 19 մայիսի, 2009թ.(ԱՄՆ-Հայաստան Հովանոցային համաձայնագիր)

Բ. Կենսաբանական զենքի ստեղծման համար օգտագործելի տեխնոլոգիայի, ախտածինների և փորձառության տարածման կանխարգելման ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր՝ կնքված Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության միջև առ 16 սեպտեմբերի, 2010թ. (Կենսաբանական վտանգների նվազեցման իրականացման համաձայնագիր-Հայաստան)

Հարգելի գեներալ-լեյտենանտ Հարությունյան,

Համաձայն վերոհիշյալ համաձայնագրերի, Վտանգների համատեղ նվազեցման իր ծրագրի շրջանակներում ԱՄՆ պաշտպանության նախարարությունը տրամադրում է աջակցություն Հայաստանին ԶՈԶ-ի տարածումը կանխելու և վտանգները նվազեցնելու ուղղությամբ՝ Կենսաբանական ոլորտում ներգրավման համագործակցային ծրագրի (ԿՈՆՀՇ) և Զանգվածային ոչնչացման զենքի տարածման կանխարգելման ծրագրի (ԶՈԶ-ՏԿՇ) միջոցով:

Նախատեսում ենք անցկացնել ԿՈՆՀՇ-ի գործադիր վերանայումը ս.թ. մարտի 13-ին, Երևանում: Այս վերանայման ընթացքում կքննարկվեն ԿՈՆՀՇ-ի նպատակները, առաջնահերթ գործողությունները, համատեղ ակնկալիքները, ինչպես նաև որևէ այլ հարց, որը վերջին ժամանակներս կարող է ծագած լինել: Չնայած նոր ԶՈԶ-ՏԿ ծրագիրը ՀՀ ազգային անվտանգության ծառայության Սահմանապահ զորքերի հետ դեռևս սկզբնական փուլում է, կցանկանայինք քննարկել նաև այդ ծրագրի նպատակները, վերանայել նրա ընթացիկ վիճակը և առաջիկա անելիքները:

Ինձ հետ միասին գործադիր վերանայման այցին մասնակցելու են ներկայացուցիչներ ԱՄՆ պաշտպանության նախարարի գրասենյակի Վտանգների համատեղ նվազեցման ծրագրի քաղաքականության բաժնից, ԱՄՆ պաշտպանության նախարարի գրասենյակի Վտանգների նվազեցման և սպառազինությունների վերահսկման բաժնից, ինչպես նաև Պաշտպանական վտանգների նվազեցման հայաստանյան գրասենյակի (ՊՎՆԳ) ղեկավար փոխգնդապետ Մարկ Ռիձինսկին, ԿՈՆՀՇ-ի և ԶՈԶ-ՏԿՇ-ի ղեկավար անձինք և համապատասխան աջակցող անձնակազմը:

Հայցում եմ Ձեր աջակցությունը՝ համապատասխան համագործակցող նախարարությունների ներկայացուցիչներին հրավիրելու և սույն առաջին տարեկան վերանայմանը նրանց մասնակցությունը երաշխավորելու գործում: Քննարկումների ընթացքը սահուն դարձնելու նպատակով բրիֆինգները կթարգմանվեն հայերեն և նախապես կտրամադրվեն հայկական կողմին: Նյութերը ստանալուն պես խնդրում եմ հայտնել, արդյոք կան լրացուցիչ հարցեր քննարկման մեջ ներառելու համար:

Կցանկանայի առաջարկել անցկացնել գործադիր վերանայումը ս.թ. մարտի 13-ին, ժամը 14:30-ին Երևանում: Խնդրում եմ մինչև ս.թ. մարտի 1-ը տեղեկացնել, արդյոք սույն առաջարկը ընդունելի է, որպեսզի մենք կատարենք նախապատրաստական աշխատանքները:

Վերանայումն արդյունավետ անցկացնելու համար առաջարկում եմ քննարկման հետևյալ հարցերը.

ԿՈՆՀ ծրագիր

- Հատուկ վտանգավոր ախտածինների կոնսոլիդացում մեկ կենտրոնական կառույցում և այդ կառույցի գործառույթների/ դերի պարզաբանում
- Տարածաշրջանային մոտեցում առողջապահական ոլորտում անվտանգության հարցին
- Քննարկում Հայաստանի կենսաանվտանգության և կենսաապահովության մշակույթի ընթացիկ վիճակի մասին
- Կայուն համակարգի նախագծում և իրականացում

ՁՈՁ-ՏԿ ծրագիր

- Տեղեկացում Իրականացման համաձայնագրի վերաբերյալ
- Ծրագրի նպատակները
- Ծրագրի ընթացիկ վիճակը
- Առաջիկա անելիքները

Հարցեր ունենալու կամ աջակցության կարիքի դեպքում, ինչպես նաև քննարկման օրակարգում այլ հարցեր առաջարկելու համար խնդրում եմ դիմել ՊՎՆԳ-ի ղեկավար փոխգնդապետ Մարկ Ռիձինսկուն, ԱՄՆ դեսպանություն՝ 10 49 40 34 հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստի rydzynskimj@state.gov հասցեով:

Ակնկալում եմ նորանոր հաջողություններ մեր համատեղ ջանքերի արդյունքում:

Հարգանքով՝

//ստորագրություն//

Դր. Ս. Էլիզաբեթ Ջորջ
Պաշտպանական վտանգների նվազեցման գործակալության
Վտանգների համատեղ նվազեցման ծրագրի տնօրեն

Պատճենը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ՀՀ առողջապահության նախարարություն
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքեր